

նեցուն եւ տէր Յիսուս առատ պարգեւաւք լցուցէ զամենեւեանն, եւ նմա փառք ընդ հաւր եւ ընդ ամենասուրբ հոգւոյն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն :

«Արդ աղերսանաւք աղաչեմ եւ խնդրեմ ի ձէնջ զլաւն եւ զբարին եւ զհաւանոյն առաւօծոյ եւ մարդկան, զՍարգիս քահանայ եւ զեղբայրն իւր ըզնիրեցեալ զՍափլան եւ ձեռնասուն աշակերտն զԳաւլի, յիշման արժանի տարաբէք եւ զնացելոց առ Քրիստոս հանգիստ եւ ողորմութիւն խնդրեցէք յառաւօծոյ, զոր եւ վասն մեր խիստ էր ցաւակից ի գրոցս զրելս, իսկ մեք հոգւով եւ մարմնով հանդաք ընդ հովանեաւ սմայ : Քրիստոս որ առատ է ի սուրբ րարեաց, հասուցէ ընդ միտն հաղարապատիկ աստ եւ հանդերձելումն՝ զնացելոյն յարութիւն կենաց եւ կենդանեացն յերկար ժամանակ :

«Ընդ նմին եւ զվարդան վարդապետն, որ եւ բազում լուսաւորութեան բանիւ խրատէր հանապազ եւ զհոգեւոր եղբայրն մեր զՅովհաննէս յիշման արժանի արարէք, զի մեզ եւ ձեզ ամենեցուն առհասարակ ողորմեացի զթաճն աստուած յարն կարեաց, ուր սնտոի բանքն սպառին եւ բարի գործքն թաղաւորեն :

«Արդ զժողրեցաւ սա ի նոյն վանս Յոհաննու սուրբ Կարապետիս եւ մասը լուսոյ սրբոյ Կաթողիկէիս, հրամանաւ եւ արդեամբք տէր, Համապաստիս, ի թվարեութեանս Հայոց ՁԼԷ (1288) : ... զՍաշատուր զաշակերտս մեր յիշեցէք ի տէր» :

Տեսանք թէ Համապաստ Եպիսկոպոս «ցանկացող եղել այժմ աստուածաբն մատենագիրս, եւ ետ զրել զսա ի հալալ արդեանց», եւ զբնութեան ժամանակ ստացող-մեկեկեասի «զարեն մերձաւորսն զկենդանիս» կային, որոնց անունները զժրախտարար ուղղակի չեն յիշուիր յիշատակարանիս մէջ : Սակայն կը յիշուին «զՍարգիս քահանայ եւ զեղբայրն իւր զնիրեցեալ զՍափլան», որ անտարակոյս նոյն Սափլանն է, որ Յովհաննաւանքի յիշատակարանի մը մէջ, անթուակիւն սակայն ժԳ դարէն, կ'արձանագրէ որ «էտու ինչ ի ժամատունս . եւ սոքա խոստացան ի տարոջն : Ժ : (10) աւր ժամ ի տաւնի սր Սարգսին : Ե (5) : Ինձ եւ : Բ (2) Գոհար մլքին, եւ : Գ (3) : Սուրթին : Մեք եւ ազգ մեր ծառասեցուք սրբոցս» (Ղաֆաղարեան, Անդ, թիւ 54) : Կը խորհիմ որ Սարգիս քահանայ եւ իր Սափլան եղբայրը Համապաստ Եպիսկոպոս Մամիկոնեանի 1288 թուականէ ձեռագրի յիշատակարանին մէջ յիշուելու համար պէտք է որ Համապաստ Եպիսկոպոսի ազգականները եղած ըլլան, այսինքն Գոհար Մամիկոնեաններու ժԳ դարու շառաւիղներ, ինչպէս ըլլալու էին նաև Սափլանի արձանագրութեան մէջ յիշուած Գոհար Մէլիքն ու Սուրթը :

Դարձեալ Երեւանի թիւ 1531 Ժողովածուն գրուած է 1289ին, որուն յիշատակարանները կու տամ հոս : Էջ 230ր. «Այս պատմութիւն իմաստասիրական ոչ գոյով ի սուրբ մենաստանիս՝ ի վանս Յովհանու : Ես տէր Համապաստս բազում փափազանաւք ի խնդիր էի, զի յես իմ մնասցէ ինձ, ընծայ ընդ մեծամեծս, ի սուրբս այս Սիոնի կաթողիկէի : Արդ աղաչեմ զձեզ մանկունք սուրբ տաղաստի, հայցել ի Քրիստոսէ զթողութիւն յանցանաց մերոց, եւ ինձ եղկելի գրչիս» :

Էջ 306ր. «Աւազ մեծի աղեախս եւ անմխիթար ոգոյս, որ էհաս տանս վրաց եւ քրիստոնէից, զի սպանաւ թագաւորն Դէմէտրէ, յազգէն նետողաց, ոչ ինչ մահու պարտական, ի սահմի ամսոյ, եւ էր թիւն ՁԼԸ (1289) : Եւ ահայ ի մեծ վտանդի կանք, տէր փրկեա զմեզ նեղութենէ, ամէն» :

Էջ 123ր. «Չառաջնորդ գրոցս, զսրբազան էպիսկոպոսն զտէր Համապաստ յիշեալիք ի Քրիստոս եւ զԳրիգորես կրաւնաւոր» :